սիրալի փափաղն, ջերմեռանդ սրտով կշտապէին հասնել սուրբին՝ իւրեանց մուրատը պահանջել. իսկ իմ ցանկութիւնը կրկին էր, ուխտիս հետ կը ցանկայի հնութիւն մի տեսնել և աւանդութիւն մի լսել։

Սակայն ըստ իմ ցանկութեան տեսայ ոչինչ. միայն բազմութիւն մի, որ խումբ խումբ ասա դիմելով խունկ ու մոմ կը վառէին. մեծ ու փոքր, պատանի ու աղայ տարածուած էին շրջակայ բարձրութիւններու վերայ, կը քաղէին մասուր, եղվրդի և ն. կը կոխոտէին այն վայրերն, ուր Թուխ-Մանուկներ քայլած էին։

Ցեղս չունէր այնպիսի մի դիրք, որ գոնէ տեսարանով ճանապարհորդութիւնս արդիւնաւոր լինէր. երեք կողմէս խիտ լերան մէջ էի, ի հիւսիս միայն տարածուած էր Արաս և Ասաֆ գիւղերու քաւշանը. այս սուր անկեան մէջ միայն ինձ տեսանելի էր Խոշեան, Մօլա-Սիւլէյման և Սուկաւէտ։ Բարեկամ թուրք առածը կասէ «վնտռողը կամ Աստուածը կամ փորձանքը կը գտնէ»։ մեղուն ևս որ և է ծաղկի մի երբ պատահի, նիւթ մի պէտք է վերցնէ։ Իմ ևս ճանապարհորդութիւնս բոլորովին ապարդիւն չեղաւ, երբ հետաքրքրութեամբ զանազան հարցեր կառաջարկէի ժողովրդեան, ինձ յայտնեցին թէ այս տեղէն մեծ քար մի տարուած է Խաստուր և թէ նորա վերայ մի տեսակ գրեր կան։ Քանիցս վնտռեցի այդ քարը տանողը, չը գտայ, քանիցս այն գիւղը (Խաստուր) եկայ, վերջապէս գտայ. քարը մի մեթր քառակուսի տարածութիւն, $^{75}/_{100}$ մեթր հաստութիւնն ունեցող մի սեաւ կարծր քար էր, մի երեսն ամբողջովին սեպագրութիւն, որ գրուած էր դուռն, կը գործածուէր իբրև նըստարան։